

ՀՀ ԳԱԱ-ում մեկնարկեց «Հայաստանի հեռանկարներն արդի ուռուցքաբանության թերանոստիկայում»` APRICOT 2023 միջազգային գիտաժողովը



Սույն թվականի մարտի 1-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Հայաստանի հեռանկարներն արդի ուռուցքաբանության թերանոստիկայում»` APRICOT 2023 միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել են ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆի-

զիկայի բաժանմունքը և ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը: Գիտաժողովին մասնակցում են ֆիզիկոսներ, քիմիկոսներ և կենսաբաններ Հայաստանից, ԱՄՆ-ից, Հունաստանից, Հնդկաստանից: Գիտաժողովի հիմնական նպատակներից է ստեղծել գիտական

համագործակցության նոր հարթակ:

ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Արամ Պապոյանը գիտաժողովի մասնակիցներին փոխանցեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանի ողջույնի ուղերձը. «Ակադեմիկոս Աշոտ Սադյանը բարձր է գնահատում միջգիտակարգային բնույթի աշխատանքները` հատկապես ուղղված կյանքի մասին գիտություններին և առողջապահական խնդիրներին: ԳԱԱ նախագահը հաջողություն է մաղթում գիտաժողովի աշխատանքներին»:

Գիտաժողովի հիմնական թեման է «Մազմիսական նանոնյութերը կենսաբժշկության մեջ. սինթեզ և ֆունկցիոնալացում»:

«Այս ծրագիրն ունի լուրջ հեռանկարներ, քանի որ կենսաբժշկության մեջ նանոնյութերի կիրառումն առաջատար ուղղություններից է: Աշխատանքները նվիրված են ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում սինթեզված նանոմասնիկների օգտագործմանը քաղցկեղի բուժման եղանակներում: Գո-

յություն ունի «մազմիսական գերտաքացում» եղանակը, որը թույլ է տալիս թիրախավորել ու ոչնչացնել քաղցկեղային բջիջները: Մեր գործընկերները Գերմանիայից բնութագրում են մեր կողմից սինթեզված այդ նանոմասնիկների մազմիսական հատկությունները, իսկ Սալոնիկի Արիստոտելի համալսարանում իրականացվում են մազմիսական գերտաքացման նախնական աշխատանքները: Ստացված արդյունքները հեռանկարային են», - ասաց Արամ Պապոյանը:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին մինչև մարտի 4-ը: Ձեկուցումներով հանդես եկան գիտնականներ Հայաստանից և արտերկրից: Պլենար զեկուցումներով հանդես եկան պրոֆեսորներ Ալեքսանդր Մուկասյանը (Նոտր Դամի համալսարան, ԱՄՆ), Կարեն Մարտիրոսյանը (Տեխասի Ռիո Գրանդե հովիտ համալսարան, ԱՄՆ), Շիվաջի Փավարը (D.Y. Patil համալսարան, Հնդկաստան) և Մակիս Անգելակեթիսը (Սալոնիկի Արիստոտել համալսարան, Հունաստան):

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին